ԵՐԿՈՒ ՏԱՂ ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆԻՑ ԵՒ ԹՈԽԱԹԵՑԻ ՍԷՓԻԼ ՊԱԼԻՑ

Փերիա գաւառի ձեռագիր գրքերից մէկի մէջ գտնւում են երկու տաղ, որոնք ըստ ունեցած անուանց, պատկանում են մէկը Յովնաթանին, որ կարծում ենք Նաղաշ Յովնաթանը պէտք է լինի, իսկ միւսը՝ Թուխաթեցի Սէփիլ Պալին:

Նաղաշ Յովնաթանը հանդիսանում է ԺԷ–ԺԸ դարերի մեր յայտնի երգիչներից մէկը: Ծնուել է 1660–61 թուին Նախիջեւանի Շոռոթ գիւղում:

Իր եւ երգերի մասին ստեղծուած է ընդարձակ գրականութիւն: Մեր պարբերական մամուլում կան բազմաթիւ յօդուածներ, ինչպէս եւ մի քանի առանձին գրքերու մենագրութիւններ, որոնցից յիշենք Հ. Ն. Ակինեանի, Արշակ Չօպանեանի, Գ. Լեւոնեանի, Յ. Գոստուրեանի, Լէօյի եւ այլ բանասէրների աշխատութիւնները, իսկ վերջին տարիներին հրատարակուածներից՝ Մ. Ս. Մկրտչեանի մենագրութիւնը, («Նաղաշ Յովնաթան», Երեւան, 1957) եւ Մանիա Ղազարեանի (ռուսերէնով) Նաղաշ Յովնաթանի եւ Յովնաթանեան եղբայրների մասին գրուած (Մոսկուա, 1968) խիստ շահեկան ու հետաքրքիր ուսումնասիրութիւնը:

Երկրորդ երգչի մասին դժբախտաբար մեզ պակասում են անհրաժեշտ տեղեկութիւնները:

Վերոյիշեալ բանաստեղծութիւններից առաջինն ունի սիրահարական բովանդակութիւն, իսկ երկրորդը նուիրուած է Մովսէս Վարդապետին, որի անուան մօտ յետոյ աւելացուած է նաեւ Պօղոս Վարդապետի անունը:

Մովսէս Վարդապետը, ինչպէս որ երեւում է ոտանաւորի մէջ եղած յիշատակութիւններից, ըստ որի նա Էջմիածինն եւ այլ վանքեր է նորոգել, եւ Տէր Փիլիպոսն եղել է նրան աշակերտ, հաւանաբար Մովսէս Գ Տաթեւացի կաթողիկոսը պէտք է լինի, որ ընտրուել է 1629 թուի Յունուարին եւ վախճանուել 1632 թուի Մայիսին: Նրան յաջորդել է Փիլիպոս Ա Աղբակեցին:

Համաձայն այս ենթադրութեան, ոտանաւորն եւս գրուած պէտք է լինի 1632 թըւից առաջ:

Ձեռագիրը, որից վերցրել ենք այս երկու տաղը, Տօնացոյց է, գրուել է ՌՀԳ (1624) թուին, Գասպար Սարկաւագ Տաթեւացիի ձեռքով: Վայրն անյայտ է: Բանաստեղծութիւնները պատկանում են երկրորդական գրչի եւ գտնւում են ձեռագրի 100բ–101ա եւ 110բ–112բ թերթերում:

Ա

Առաւօտէց վարթ կու քաղես,*
Ինձ լաց կանես դու ծիծաղես,
Մեր տունն գաս ինձ ղօնաղ[1] ես,
Հազար բարի ինձ մօտ արի,
Բարով չես տալ, խաբար չեմ թէ քեզ ինչ
(արի:

Արի միմեանց գիր ողարկենք,[2]
Բառ ու թոհմաթներն[3] թարկենք,
Արի ցուրտ(ա)յ մի տեղ պարկենք,
Որ տաքանանք գինովանանք,
Նուռն ու խնձոր մազայ պիտի, ծոցդ[4] բա-
(նանք:**

Աղայ քուն ես թէ արթուն ես,
Ինձ հետ շարթ ու եղրար ունես,
Ես խօ խաբար եմ քե կամք ունես,

---

* *Սոյն տաղի սկզբի տունը, պակասաւոր ձեւով, բերուած է Մ. Ս. Մկրտչեանի «Նաղաշ Յովնաթան» գրքոյկում, էջ 88:*

1 *Հիւր:*

2 *Բնագրում՝ ողորկենք:*

3 *Նախատինքները:*

4 *Բնագրում՝ ցոցդ:*

** *Սոյն տունը կայ մի այլ տաղի մէջ եւս (Լէօ, «Երկեր», Գ հատոր, էջ 376):*

digitised by A.R.A.R.@

էր նազ կանես հոգիս հանես,
Էի բիմօրվաք[5] մէկ հոսխմ արայ, [6] էր
լիու ադամես:

Ահա զարու�մին հլաւ, հկաւ մարտն,
կու շատանայ սիրոյ դարտն,
Ղափիլ[7] մէջ կը(ն)կնի նամարտն. [8]
Լաւ իմացիր զայիմ կացիր,
Քո սիրոն ինձ խեռ մէկ արայ, ուբախ կա-
ցիր:

Ահայ իմ սիայմօր ոսկէ խաւ,
Քաղցր(ա)յ խօսիք նախշաւն կոմաւ,
Մէկ օր կատես կամ լաւ կամ վատ,
Ցեսամ էնտուր շէյդայ[9] բէլբուլ,
Թող հս կանչիմ որ դու բացես գըռմվի
լգուլ: [10]

Քանի քոյ պատրանկ կենդան չի.
Քո տեսանդէ դոր կայմանչի,
Քանի քո ըսկեսուրն տան չի,
Նկ այնվանն[11] քեր սեղանն,
Գինի խմենք տապերն ասենք Հովնայթանն:

Բ

Գոյատան Բ Մովսէս Վ(ա)րդ(ա)պ(է)տին
Ե Պողոս Վ(ա)րդ(ա)պ(է)տին

Ականչ կայէ ու լսեցէք
Բանն ասեմ վարդապետին,
Այս գովասանքս որ ասացինք,
Մեր տ(է)ր Պ(ա)ղ(ա)ս տ(է)ր Մովսէս վարդա-
պետին(ցն):

Բազում նկեղեցի շինեց,
Ժողովք ար(ա)ր գերի գնէց,
Նոր Լուսաւորիչ[12] սնուանէց,
Մեր տէր Մովսէս վ(ա)րդ(ա)պ(ետ)ն:

Շինեցին վանք ու անապատ,
Սա հաթեցիքն(?) չինին հաւատ, [13]
Հօտց[14] (?) Շոռոտ Աստապատ,
Մեր տ(է)ր Մովսէս վ(ա)րդ(ա)պ(է)տն:

Ձեռն էր Ասկի բուրվառն,
Հազաւ լուսեղէն շուրջառն,
Թնակ(է)ալ էր Հայոց[15] թառն,
Մեր տ(է)ր Մովսէս վ(ա)րդապետն:

Գլուխն էր դրէլ ոսկի քազ,[16]
Մատուցանէր ս(ուրբ)ր պատարագ,
Եղեւ մեր ուրինաց ճրագ,
Մեր տ(է)ր Մովսէս վարդ(ա)պ(է)տն:

Աշայկերտն տ(է)ր Փիլիպոս,
Մարմինն կուս հոգին էր լուս,
Եղեւ մեր ուրինացն յուս,
Մեր տ(է)ր Մովսէս վարդ(ա)պ(է)տն:

Ցուսանանք որդին միածին,
Միամտուր ծնունդ կուսածին,
Նոր նորոգէց էջմիածին,
Մեր տ(է)ր Մովսէս վարդ(ա)պ(է)տն:

Համազազն որ գիրն գրէց,
Ինքն ընգալ[17] որ խոր փորէց,
Ս(ուրբ)ր էջմիածինն ծգնէց,
Մեր տ(է)ր Մովսէս վարդ(ա)պ(է)տին:

Գնացին խանին դիւանն,
Ծուռ էր Համազազին բանն,
Վ(ա)յ գնեց Ըզչիկանն,
Մեր տ(է)ր Մովսէս վարդապ(է)տին:

Ճէնինն եղաւ[18] մահմէտական,
Համազազն սատանական,
Ս(ուրբ)ր հոգին եղաւ ազգն(ա)կ(ա)ն,
Մեր տ(է)ր Մովսէս վ(ա)րդ(ա)պ(է)տին:

Սէփիլ Պալն Թուխաթեցի,
Այս մէկ ֆ(ա)նի բանէն ապ(ա)ցի,
Ցուռն անգայ մեղէս լացի,
Մեր խ(է)ր Մովսէս վ(ա)րդ(ա)պ(է)տին:

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

Նոր–Ջուղա

---

5 *Անխիզ:*
6 *Ոգորմիր, խղճա:*
7 *Ցանկարծ:*
8 *Տժարդ մէկը:*
9 *Եկեղաբուած, սիրահարուած, սիրուց իրեն նահատակող: Բնագրում՝ չէժդայ*
10 *կարմիր վարդ (ծաղիկ):*
11 *Օդայ, բացօթեայ սենեակ:*
12 *Բնագրում՝ էլուսորիչ:*
13 *Բնագրում՝ հաատ:*
14 *Հաւաց(?):*
15 *Հայոց:*
16 *Բնագրում՝ Թաքզ*
17 *Բնագրում՝ ընգռ:*
18 *Բնագրում՝ խզռ:*

digitised by A.R.A.R.@